ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
MINISTRY OF FOREIGN AFFAIRS OF THE REPUBLIC OF ARMENIA

1112/14023

08.10.2019

ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 091407836, էլ. հասցե. foi@foi.am, www.foi.am
«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ տնօրեն
Շուշան Դոյդոյանին

Հարգելի՛ տիկին Դոյդոյան,

Ի պատասխան Ձեր հարցման (ՀՀ ԱԳՆ մուտք է եղել 04.10.2019թ.)՝ հայտնում ենք, որ «ՀՀ կառավարության և Իսրայելի Պետության կառավարության միջև մշակույթի, կրթության, գիտության, սպորտի և երիտասարդության ոլորտներում 2017-2020թթ. համագործակցության մասին» գործնական ծրագիրը սահմանում է այն ոլորտները, որոնց շրջանակներում Հայաստանի Հանրապետության և Իսրայելի կառավարությունները ցանկություն ունեն համագործակցելու՝ առանց հստակեցնելու այն գործնական մեխանիզմները և միջպետական փոխանակման ծրագրերը, որոնք հնարավորություն կտան կյանքի կոչելու նշյալ ոլորտներում երկու երկրների կառավարությունների համագործակցության ցանկությունը: Վերոնշյալ հանգամանքով է պայմանավորված Եվգենյա, Լիանա և Անուշ Դրամփյաններին ս.թ. ապրիլի 29-ի նամակում տրված պատասխանը, որ Հայաստանի և Իսրայելի միջև չկան կրթության ոլորտում միջպետական փոխանակման ծրագրեր, ինչը գործնականում անհնար է դարձնում նրանց խնդրանքն իրականացնելը: ՀՀ արտաքին գործերի նախարարությունը լիահույս է, որ Իսրայելում ՀՀ դեսպանության բացումը կնպաստի նաև այս ուղղություններով համագործակցության հետագա խորացմանը:

«ՀՀ կառավարության և Իսրայելի Պետության կառավարության միջև մշակույթի, կրթության, գիտության, սպորտի և երիտասարդության ոլորտներում 2017-2020թթ. համագործակցության մասին» գործնական ծրագրի էլեկտրոնային տարբերակը հասանելի է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կայքէջում՝ հետևյալ հղումով http://edu.am/index.php/am/documents/view/1754:

Հայաստանցի մշակութային գործիչներն առկա միջազգային ծրագրերին կարող են ծանոթանալ դիմելով իրավասու գերատեսչությանը՝ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը: Վերջինիս կողմից որևէ գործչի մասնակցության վերաբերյալ ուղարկված կարծիքի հիման վրա ԱԳՆ-ն իր իրավասությունների ներքո գտնվող հարցերում տվյալ գործչին տրամադրում է աջակցություն այս կամ այն ծրագրին մասնակցելու համար:

Հարգանքով՝

Invalid signature

Ս. ԲԵՋԱՆՅԱՆ

Signed by: BEJANYAN SEROB 3912720061

Սերոբ Բեջանյան
Լրատվության և հանրային
դիվանագիտություն վարչության պետ

Կատարող՝
Լրատվության և հանրային դիվանագիտության վարչություն
Հեռ. 060 620 234